



«22» հունիսի 2020թ.

N 2

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման ընթացակարգի վերաբերյալ

Հարց

Ռուսաստանի Դաշնությունից կազմակերպությունը ներմուծել է ստորև նշված ապրանքները, որոնց ԱՏԳ ԱԱ դասակարգիչը ըստ տարանցիկ հայտարարագրի, 3404900009 է: Սակայն որոշ ապրանքներ (Արագ չորացող լաք կիսափայլ 15մլ, Փշովի լաք 400մլ), ըստ մեր դիտարկումների, դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա են: Տվյալ պարագայում հարկային օրենսգրքի ո՞ր հոդվածով կամ ի՞նչ նորմատիվ ակտերով պետք է ուղղորդվել, վերը նշված ապրանքները արդյո՞ք ենթակա են դրոշմապիտակներով դրոշմավորման, թե՞ ոչ:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը,

- 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված)՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների վրա Հայաստանի Հանրապետության տարածքում օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն օտարվում են նույն տարայավորմամբ (փաթեթավորմամբ) ու ապրանքային տեսքով՝ առանց քաշը (ծավալը) փոփոխելու, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի,

- 391-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները տրամադրվում են Օրենսգրքի 391-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողներին,

- 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողները (այդ թվում՝ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 6-րդ մասում նշված հարկ վճարողները) ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները ստանում են հարկային մարմնից,

- 393-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ներմուծվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերն ստացվում են մինչև այդ ապրանքների Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, իսկ Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտադրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերը, ինչպես նաև Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները՝ մինչև այդ ապրանքների օտարումը,

- 393-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները տրամադրվում են էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտի և հայտի ներկայացման օրվա դրությամբ նախկինում ստացված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվության հիման վրա, հայտ ներկայացրած կազմակերպության լիազորած ֆիզիկական անձին (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա կողմից լիազորված ֆիզիկական անձին) հայտը ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հարկ է նշել, որ ապրանքների դրոշմավորման կանոնները սահմանված են ՀՀ կառավարության 06.07.2017թ. N773-Ն որոշմամբ: Միաժամանակ, հայտնում ենք, որ ըստ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումների ընդունումն իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 14.04.2015թ. N220-Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

